

## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

*Որոնց որ կը վերաբերի*

Երբոր դադրի շըռինքը ձեր,  
Պիտի լըսուի երգիս մըրմունջն,  
Որ օրօրէ յուշ եւ անուրջ,  
Եւ բորբոքէ կարօտ ու սէր:

Ձեր հոգիին մէջ կայ հեռ ու նախանձ,  
Իմ հոգիիս մէջ միայն սիրոյ գանձ,  
Ձըրի կը բաժնեմ գանձըս ամենուն,  
Ու կ'երթամ անդարձ:

Ես տափակն ու տափարակն եմ արհամարհեր,  
Նայուածքս միշտ կատարներուն յառած պահեր.  
Հակատագրէն թէեւ թեւերքս ջախջախուած,  
Ես բարձունքները մագըլցեք եմ անվեհեր:

\*\*\*

Իմ մանկութեան ընկերներ, գացիք անդարձ ու անհետ,  
Ումանք հողին տակ մըտաք, պահուրտեցաք առյաւէտ.  
Մէկայնեքդ ցըրտեցաք աշխարհի չորս ծագերուն,  
Ամէն մէկըդ իմ սիրտէն տարիք մաս մը ձեզի հետ:

Ինչ որ տըւեր էիր ինձի տոկոսով ետ դարձուցի,  
Տըւի սիրով ու խընդութեամբ, ինձի ոչինչ պահեցի.  
Ա՛ստիկ ձեռքս է պարապ, սիրտըս թափուր մի վանդակ,  
Տալէդ առաջ ազգատ էի, նորէն ազգատ մընացի:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

